

Նպատակ 11: Քաղաքները դարձնել ներառական, դիմակայուն, անվտանգ և կայուն

Բնակարանային ապահովության և քաղաքաշինության վերաբերյալ ՄԱԿ-ի խորհրդաժողովը տեղի է ունեցել Էկվադորի մայրաքաղաք Կիտոյում 2016 թ. հոկտեմբերի 17-20-ը, և Կայուն զարգացման 2030 օրակարգի ընդունումից հետո այն ուրբանիզացիայի վերաբերյալ ՄԱԿ-ի առաջին համաշխարհային գագաթնաժողովն էր:

Habitat III-ն առաջարկում է եզակի հնարավորություն՝ քննարկելու կարևոր մարտահրավերները՝ թե՛ ինչպես կարող են նախագծվել և կառավարվել քաղաքներն ու գյուղերը, որ կատարեն իրենց դերը՝ որպես կայուն զարգացման խթանիչ, և ինչպես դրանք կարող են ազդել Կայուն զարգացման նպատակների և Կլիմայի փոփոխության վերաբերյալ Փարիզի համաձայնագրի իրագործման վրա:

Կիտոյում աշխարհի առաջնորդներն ընդունեցին Նոր քաղաքային օրակարգը, որը սահմանում է կայուն քաղաքային զարգացմանը հասնելու համընդհանուր չափանիշները՝ վերանայելով քաղաքները կառուցելու, կառավարելու և դրանցում մեր ապրելու եղանակները՝ ի մի բերելով ներգրավված գործընկերներին, համապատասխան շահագրգիռ կողմերին, կառավարության բոլոր մակարդակների՝ ինդիան առնչվող դերակատարներին, ինչպես նաև քաղաքացիական հասարակությանը և մասնավոր հատվածին:

Քաղաքները գաղափարների, առևտրի, մշակույթի, գիտության, արտադրողականության, սոցիալական զարգացման հանգույցներ են: Իրենց լավագույն վիճակում քաղաքները մարդկանց հնարավորություն են տվել սոցիալապես և տնտեսապես զարգանալու:

Այնուամենայնիվ, բազմաթիվ մարտահրավերներ կան՝ թե՛ ինչպես պահպանել քաղաքները, որ շարունակվի աշխատատեղերի ստեղծումը և բարգավաճումը՝ միաժամանակ չճահագործելով հողն ու ռեսուրսները: Ընդհանուր քաղաքային մարտահրավերները ներառում են գերբնակեցվածությունը, հիմնական ծառայությունների ապահովման համար ֆինանսական միջոցների բացակայությունը, պատշաճ բնակարանների պակասը և վատթարացող ենթակառուցվածքները:

Այն դժվարությունները, որոնց բախվում են քաղաքները, կարող են հաղթահարվել այնպիսի եղանակներով, որ թույլ կտան դրանց շարունակել բարգավաճել և մեծանալ՝ միաժամանակ բարելավելով ռեսուրսների օգտագործումը և կրճատելով աղտոտումն ու աղբատությունը: Ապագան, որ մենք ենք ուզում, ենթադրում է բոլորի համար հնարավորությունների քաղաքներ՝ հիմնական ծառայությունների, էներգիայի, բնակարանների, տրանսպորտի հասանելիությամբ:

ԻՆՉՈՒՒՄ Ե ԱՅՆ ԿԱՐԵՎՈՐ

Առաջիկա տասնամյակներին քաղաքների աճի 95%-ը տեղի կունենա զարգացող երկրներում:

Ո՞րն է նպատակը

Քաղաքները դարձնել ներառական, դիմակայուն, անվտանգ և կայուն:

Ինչո՞ւ

Մարդկության կեսը՝ 3,5 մլրդ մարդ, այսօր ապրում է քաղաքներում, և այս թիվը կշարունակի աճել: Քանի որ մարդկանց մեծամասնության ապագան կապված կլինի քաղաքների հետ, այն ամենամեծ խնդիրների լուծումները, որոնց բախվում են մարդիկ՝ աղքատություն, կլիմայի փոփոխություն, առողջապահություն, կրթություն, պետք է գտնել քաղաքային կյանքում:

Որո՞նք են այն ամենահրատապ մարտահրավերները, որոնց ներկայումս բախվում են քաղաքները

Անհավասարությունը մեծ խնդիր է: 828 մլն մարդ ապրում է հետնախորշերում, և այս թիվը կշարունակի աճել: Քաղաքներում էներգիայի սպառման և աղտոտման մակարդակները նույնպես անհանգստացնող են: Քաղաքներն զբաղեցնում են մոլորակի տարածքի 3%-ը, սակայն պատասխանատու են էներգիայի սպառման 60-80%-ի և ածխածնի արտանետումների 75%-ի համար: Մարդկանց մեծ կուտակումների և մեծ թվով կառույցների տեղակայման պատճառով շատ քաղաքներ նաև ավելի խոցելի են կլիմայի փոփոխության և բնական աղետների նկատմամբ, քաղաքների դիմակայունությունը կարևոր է մարդկային, սոցիալական և տնտեսական կորուստներից խուսափելու համար:

Ես ապրում եմ քաղաքում, սակայն չեմ առնչվում այս խնդիրներից որևէ մեկին: Ինչո՞ւ պետք է մտահոգվեմ:

Բոլոր այս խնդիրներն ի վերջո ազդելու են յուրաքանչյուր քաղաքացու վրա: Անհավասարությունը կարող է հանգեցնել խռովությունների և անապահովության, աղտոտումը վատթարացնում է յուրաքանչյուրի առողջությունը և ազդում է աշխատողների արդյունավետության ու հետևաբար՝ տնտեսության վրա, իսկ բնական աղետներն ունեն յուրաքանչյուրի ապրելակերպը վնասելու ներուժ:

Ի՞նչ կպատահի, եթե պարզապես թույլ տրվի, որ քաղաքներն աճեն առանց միջամտության

Վատ պլանավորված ուրբանիզացիայի վնասը կարող է արտահայտվել ամբողջ աշխարհում որոշ հսկայական հետնախորշերի առաջացմամբ, խճճված երթևեկությամբ, ջերմոցային գազերի արտանետումներով և տարածվող արվարձաններով: Հետնախորշերը զսպող գործոն են ՀՆԱ-ի համար և նշանակում են կյանքի ավելի ցածր սպասվող տևողություն: Ընտրելով կայուն կերպով գործելը՝ մենք ընտրում ենք կառուցել այնպիսի քաղաքներ, որտեղ բոլոր քաղաքացիներն ապրում են արժանավայել կյանքով և կազմում են քաղաքի արտադրողական շարժընթացի մի մասը՝ նպաստելով ընդհանուր բարգավաճման ու սոցիալական կայունությանը՝ առանց վնասելու շրջակա միջավայրը:

Արդյո՞ք ծախսատար է կայուն գործելակերպերի որդեգրումը

Համեմատած օգուտների հետ՝ ծախսերը նվազագույն են: Օրինակ՝ գործունակ հանրային տրանսպորտային ցանցի ստեղծումը ծախս է պահանջում, սակայն եկամուտները հսկայական են տնտեսական գործունեության, կյանքի որակի, շրջակա միջավայրի և կապակցված քաղաքի ընդհանուր հաջողության առումով:

Ի՞նչ կարող եմ անել՝ աջակցելու այս նպատակի իրագործմանը

- Ակտիվ հետաքրքրություն ցուցաբերել թո քաղաքի ղեկավարման ու կառավարման հարցում:
- Ուշադրություն դարձնել՝ ինչն է գործում, և ինչը չի գործում թո համայնքում:
- Ջատագովել քաղաքի այն տեսակը, որը, վստահ ես, պետք է թեզ:
- Մշակել թո շենքի, փողոցի և թաղամասի վերաբերյալ տեսլական և գործել դրան համահունչ: Արդյո՞ք կան բավարար աշխատատեղեր: Առողջապահական հաստատությունները մո՞տ են: Քո երեխաները կարո՞ղ ապահովությամբ ոտքով դպրոց հասնել: Կարո՞ղ ես երեկոյան զբոսնել թո ընտանիքի հետ: Ի՞նչ տարածության վրա է հանրային տրանսպորտի ամենամոտ կանգառը: Ինչպիսի՞ն է օդի որակը: Ինչպիսի՞ն են հանրային տարածքները: Որքան ավելի լավ պայմաններ ստեղծես թո համայնքում, այնքան ավելի մեծ կլինի ազդեցությունը կյանքի որակի վրա:

Կայուն զարգացման նպատակների և 11-րդ նպատակի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ հղումով՝

<http://www.un.org/sustainabledevelopment>